ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումար 30.000 ՀՀ դրամ:

Հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Ագաստ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 12.01.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-22» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am